ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81

N 351
23 մայիս 2019թ.

ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՀԱՅԿ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի /այսուհետ՝ Պատվիրատու/ և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կատարող/ միջև սույն թվականի ապրիլի 26-ին կնքված ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/02-04 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ համաձայն Կատարողը ստանձնել է պայմանագրի 1.1 կետով և հավելված 1-ով /Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց/ սահմանված Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը /այսուհետ՝ աշխատանք/:

2019թ մայիսի 13-ին Կատարողը Պատվիրատուին է հանձնել վերը նշված աշխատանքները: Հանձնված աշխատանքների ուսումնասիրությամբ պարզվեց, որ դրանք չեն համապատասխանում պայմանագրի հավելված 1-ով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետը՝ Պատվիրատուն որոշեց.

1. ամբողջությամբ միակողմանի լուծել պայմանագիրը.
2. կատարողի կողմից պայմանագրի շրջանակներում ներկայացրած տուժանքի համաձայնագիրը և կից պահանջագիրը բնօրինակներով ներկայացնել

Վճարողի Բանկ՝ սահմանված գումարը պահանջագրում նշված՝ Շահառուի բանկային հաշվեհամարին փոխանցելու նպատակով.

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացնել լիազոր մարմին՝ նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Կատ. ֆինանսատնտեսագիտական,եկամուտների Հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ՝ Գ. Խաչատրյան
094-357087